ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գագիկ Ղալաչեան

Վերջին տարիներին միջազգային իրաւունքով կարգաւորուող միջ-պետական յարաբերութիւնների համակարգում կատարուեցին լուրջ փոփոխութիւններ: Համաշխարհային գաղութատիրական համակարգի կործանմանը հետեւեց Խ.Ս.Հ.Մ. փլուզումն ու համայնավարական հասարակարգի անկումը, ամբողջատիրական վարչակարգին բնորոշ ազգային ինքնավար միաւորների դաշնակցային կառավարման ճգնաժամը: Աշխարհի քարտէզի վրայ ի յայտ եկաւ նոր պետութիւնների մի ամբողջ շարք: Պետական տրոհման գործընթացը կամ պետական անկախութեան եւ ինքնիշխանութեան ձեռք բերմանն ուղղուած ազգային ազատագրական շարժումների ընթացքն այսօր էլ շարունակում է մնալ այժմէական միջազգային խնդիր:

Ներկայիս պայմաններում այժմէական նշանակութիւն է ստացել միջազգային իրաւունքի սկզբունքների եւ նորանկախ պետութիւնների միջազգային ասպարէզ դուրս գալուն նպաստող իրաւական սահմանակարգի հետ առընչուող, մասնաւորապէս՝ պետութիւնների ճանաչման խնդիրների ուսումնասիրութիւնը:

Նոր պետութիւնների իրաւական ենթակայ լինելու վերաբերեալ գերակշռում է հետեւեալ տեսակէտը՝ անխտիր բոլոր ինքնիշխան պետութիւնները համարւում են հաւասար, անկախ միջազգային իրաւական ճանաչման փաստաթղթի առկայութիւնից: Միաժամանակ, ինքնիշխան կարգավիճակի առաջացումը կախուածութեան մէջ է դրւում տրուեալ տարածքային սահմաններում իշխանութեան կենտրոնական մարմինների լիազօրութիւնների օրինականութեան ներքին եւ միջազգային ճանաչումից:

Ինչպէս յայտնի է, պետութեան առաջացումը միշտ իր յետեւից բերում է քաղաքական եւ իրաւական հետեւանքներ:

Առաջին. պետութեան առաջացումը պատմական փաստ է, որի հետ միջազգային իրաւունքը ստիպուած է հաշուի նստել:

Երկրորդ. պետութեան առաջացումը առարկայական քաղաքական փաստ է, որը կապուած է միջազգային իրաւական վերնաշէնքի փոփոխութեան հետ:

Երրորդ. պետութեան առաջացումը իրաւական փաստ է, որն ունի այնպիսի հետեւանքներ, ինչպիսիք են՝ միջազգային իրաւայարաբերութիւնների հաստատումը, փոփոխումը կամ դադարեցումը:

Նոր պետութեան առաջացման հետ մէկտեղ առաջնային են դառնում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են այդ պետութեան ճանաչումը, իրաւաժառանգորդութիւնն ու անդամակցութիւնը միջազգային կազմակերպութիւններին:[1]

Այդ առումով հարկ է անդրադառնալ ճանաչման՝ իբրեւ միջազգային իրաւական փաստի, բնորոշմանը: Ճանաչման առաւել ընդունուած սահմանումը հետեւեալն է. ճանաչումն իրենից ներկայացնում է որեւէ պետութեան միակողմանի կամքի արտայայտում, որի միջոցով միջազգային իրաւունքի ենթական փաստում է տուեալ իրավիճակը կամ որեւէ պետութեան որոշակի նկրտումը եւ պատրաստակամութիւն է յայտնում դիտարկելու դրանք իբրեւ օրինական:[2]

Ինչպէս տեսնում ենք, ճանաչման փաստն իր մէջ ներառում է երկու տարբեր տարրեր. առաջինը ճանաչման առարկայի փաստումն է՝ իր տարբեր ձեւերով, երկրորդը՝ տուեալ առարկան իբրեւ օրինական համարելու մտադրութիւնն է: Այդ կապակցութեամբ հետաքրքրութիւն է ներկայացնում 1936 թ. Միջազգային Իրաւունքի Ինստիտուտի կողմից պետութիւնների ճանաչմանը տրուած սահմանումը. «Դա ակտ է, որի միջոցով մէկ կամ մի քանի պետութիւններ փաստում են որոշակի տարածքում քաղաքականօրէն կազմակերպուած մարդկային հասարակութեան գոյութիւնը, ... եւ, իբրեւ դրա հետեւանք, արտայայտում են իրենց կամքը՝ դիտարկելու այն իբրեւ միջազգային հանրութեան անդամ»:[3]

1.- **Վ. Ն. Դուրդենեւսկի,** «Հիմնական իրաւական հարցերը նոր պետութեան կազմաւորման ընթացքում», **Միջազգային իրաւունքի թեորիայի եւ պրակտիկայի խնդիրներ, Միջազգային Յարաբերութիւնների Ինստիտուտի գրառումներ, թող., 2, Մոսկուա, 1959, էջ 27:**

2.- **Ռ. Ա. Քալամքարեան,** «Ճանաչումն իբրեւ պետութեան միակողմանի իրաւական ակտ», **Միջ-պետական համագործակցութեան միջազգային իրաւական հիմունքները, Մոսկուա, 1983, էջ 54:**

3.- **Ռ. Ա. Քալամքարեան, նշուած աշխատութիւնը, էջ 57:**

Բնակչութեան անունից կառավարութեան ակտերի օրինականութեան ներքին ճանաչումը նախադրեալ է հանդիսանում կոնսենսուալ միջազգային իրաւական համակարգում մասնակցութեան համար: Պետութեան ճանաչումը միջազգային հանրութեան միւս անդամների կողմից հանդիսանում է լոկ իշխանութեան կենտրոնական մարմինների կայացած ներքին ճանաչման հաստատումը: «Պետութեան, իբրեւ միջազգային հանրութեան անդամի, օրինականութեան նախապայմանն է իր բնակչութեան յստակ արտայայտուած կամ ենթադրուող ներքին համաձայնութիւնը, որպէսզի որեւէ կենտրոնական մարմին իրականացնի կառավարութեան գործառոյթները»:[4]

Պետութեան ինքնիշխան կարգավիճակի միջազգային ճանաչումը իրաւական նախադրեալ է հանդիսանում միջազգային հանրութեան միւս անդամների հետ իր հաղորդակցութեան համար: Սակայն ինքնիշխան կարգավիճակի միջազգային ճանաչման բացակայութիւնը միշտ չէ, որ ի չիք է դարձնում տուեալ տարածքի բնակչութեան մտադրութիւնը՝ փոխգործակցելու, իբրեւ խումբ, միջազգային հանրութեան անդամ միւս խմբերի հետ: Նոր պետութեան չճանաչումը յանգեցնում է այն բանին, որ նրան մերժում են տրամադրել իրաւական իրաւունքներ, մինչդեռ այդ պետութիւնը կարողացել է ձեռք բերել ինքնիշխանութեան բոլոր միւս գործառական անկապտելի յատկանիշները: Նման դէպքում ճանաչումից հրաժարումը հանդիսանում է զուտ քաղաքական գործողութիւն (ակտ), որը ենթադրում է, որ նման դիրքորոշմամբ հանդէս եկող պետութիւնները մտադիր չեն յարաբերուելու տուեալ պետութեան հետ միջազգային իրաւունքի կողմից սահմանուած չափանիշների հիման վրայ:

4.- Գ. Մայեր, նշուած աշխատութիւնը, էջ 268:

Յաճախ որոշ պետութիւններ ճանաչում են մէկ այլի գոյութիւնը, երբ միաժամանակ միւս պետութիւնները հրաժարւում են նման ճանաչումից: Ակնառու օրինակ կարող է ծառայել Իսրայէլի պետութեան ճանաչման եւ չճանաչման իրավիճակը, որը յստակ ցոյց է տալիս, որ ինքնիշխան պետութեան գոյութեան ճանաչման մերժումը՝ նոյնիսկ անհրաժեշտ պայմանների առկայութեան դէպքում, դեռեւս չի վկայում նրա չգոյութիւնը: Սակայն նման մերժումը նշանակում է, որ մերժող պետութիւնը մտադիր չէ վերաբերուել այդ պետութեանը միջազգային իրաւունքի համաձայն: Հետեւաբար, միւս կողմից, հարեւանների կողմից չճանաչուած պետութիւնը պարտաւոր չէ ընդունելու նրանց նկատմամբ որեւէ տեսակի պարտաւորութիւններ, քանզի այդ պարտաւորութիւնները վերաբերում են տուեալ միջ-պետական յարաբերութիւններին եւ չեն կարող համընդհանուր լինել:

Փոխադարձ պարտաւորութեան այդ սկզբունքը հանդիսանում է ինքնիշխան պետութիւնների հաւասարութեան սկզբունքի բովանդակութեան հիմքը:

Մ.Ա.Կ.ի 1970 թ. Սկզբունքների Հռչակագրում ընդգծւում է.- «Ինքնիշխան եւ անկախ պետութեան ստեղծումը, անկախ պետութեանն ազատ միացումը կամ նրա հետ միաւորումը, կամ ժողովրդի կողմից որոշուած որեւէ այլ քաղաքական կարգավիճակի հաստատումը հանդիսանում են այդ ժողովրդի կողմից ինքնորոշման իրաւունքի իրագործման ձեւերը»:[5]

Քանի որ ազգերի եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքն ամրագրուել է միջազգային իրաւունքում, նոր պետութեան առաջացման որոշիչ օրինաչափութիւնն է հանդիսանում ազգային ազատագրական շարժումը:

Խորհրդային Միութեան փլուզման առարկայական ու ենթակայական պատճառների ամբողջ բազմազանութեամբ հանդերձ չի կարելի հերքել ազգային ազատագրական շարժման դերը, օրինակ՝ Մերձբալթեան հանրապետութիւններում, որոնք իրենց անկախութեան հռչակումից յետոյ Խ.Ս.Հ. հանրապետութիւններից առաջինն էին ճանաչուել միջազգային հանրութեան կողմից՝ իբրեւ ինքնիշխան, անկախ պետութիւններ:

Նոյն օրինաչափութեամբ էին զարգանում իրադարձութիւնները նաեւ Խորհրդային Հայաստանում, որի Գերագոյն Խորհուրդը 1990 թ. Օգոստոսի իր Անկախութեան Հռչակագրում իբրեւ վերջնական նպատակ յայտարարեց Հայաստանի լիակատար ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը: 1991 թ. Փետրուարին Հայաստանի Գ.Խ.ն որոշում ընդունեց չմասնակցել Խ.Ս.Հ.Մ. միասնականութեան պահպանման վերաբերեալ հանրաքուէին եւ, Խ.Ս.Հ.Մ. Սահմանադրութեան համաձայն, որոշում կայացրեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հանրաքուէ անցկացնելու մասին: 1991 թ. Սեպտեմբերի 21ին կայացած հանրաքուէում քուէարկողների 98,5%ը կողմ արտայայտուեցին անկախութեանը: 1991 թ. Հոկտեմբերի 17ին կայացաւ Հ.Հ. առաջին նախագահի ընտրութիւնը: Այսպիսով, Հայաստանն անցաւ միջազգային նպատակների համար ինքնիշխան կարգավիճակի առաջացման ճանապարհը: Հ.Հ. անկախութեան ճանաչման առանձին փաստաթղթեր հռչակուեցին արդէն իսկ 1991 թ. Սեպտեմբերին, սակայն ճանաչման գործընթացն արագացաւ Բելովէժեան համաձայնագրերի ստորագրումից յետոյ միայն, եւ այդ փաստը եւս գալիս է հաստատելու, որ ճանաչման սահմանակարգը, չլինելով օրինակարգուած միջազգային իրաւունքում, իրենից ներկայացնում է աւելի շուտ քաղաքական գործարք, քան՝ իրաւական աշխատակարգ:

5.- Հռչակագիր Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Կանոնակարգի համաձայն պետութիւնների միջեւ բարեկամական յարաբերութիւններին եւ համագործակցութեանը վերաբերող միջազգային իրաւունքի սկզբունքների մասին, ժողովուրդների իրաւունքներն ու ազատութիւնները, էջ 120:

Նոյնը կարելի է ասել նաեւ Հարաւսլաւիայի նախկին հանրապետութիւնների ճանաչման գործընթացի մասին, որն իր սկիզբն առաւ քաղաքական նկատառումներից: Սակայն, Խ.Ս.Հ. եւ նախկին Հարաւսլաւիայի տրոհման գործընթացը տարածուեց նաեւ այդ պետութիւնների այն ենթակաների վրայ, որոնք իրենց հերթին ենթակայութեան տակ ունէին ինքնավար միաւորումներ եւ հաւաքականօրէն բնակուող ազգային փոքրամասնութիւններ:

Խ.Ս.Հ.Մ. եւ Հարաւսլաւիայի նախկին հանրապետութիւններում 1990ականների սկզբին բռնկուած ազգամիջեան հակամարտութիւնների մեծամասնութիւնը կրում էր ազգային փոքրամասնութիւնների եւ ինքնավար միաւորումների անկախութեան համար մղուող ազգային ազատագրական պայքարի բնոյթ: Ներկայումս նշուած միաւորումների թւում կան նաեւ այնպիսիք, որոնք հռչակել են իրենց անկախութիւնը:

Այդ իմաստով անդրադառնանք Լեռնային Ղարաբաղի անկախութեան հռչակման եւ ճանաչման խնդրի նախապատմութեանը:

Ինչպէս յայտնի է, Խ.Ս.Հ.Մ. օրօք Խորհրդային Ադրբեջանի (Ադր.Խ.Ս.Հ.) կազմում ինքնավար մարզի կարգավիճակ ունեցող Լեռնային Ղարաբաղի (Լ.Ղ.Ի.Մ.) ինքնորոշման ապահովմանն ուղղուած առաջին իրաւական փաստաթուղթը Լ.Ղ.Ի.Մ.ի Ժողովրդական Պատգամաւորների Խորհրդի որոշումն էր Լ.Ղ.Ի.Մ.ը Ադր.Խ.Ս.Հ. կազմից դուրս բերելու եւ Հայկական Խ.Ս.Հ. հետ միաւորելու վերաբերեալ Հ.Խ.Ս.Հ. եւ Ադր.Խ.Ս.Հ. Գերագոյն Խորհուրդներին համապատասխան խնդրագիր ներկայացնելու մասին:

Իրաւական յաջորդ փաստաթուղթը 1991 թ. Սեպտեմբերի 2ի Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի հռչակագիրն է՝ Արցախի Հանրապետութեան ստեղծման մասին: Դրան հետեւեց Ադրբեջանի Գ.Խ.ի կողմից ընդունուած օրէնքը Լ.Ղ.Ի.Մ.ի լուծարման եւ Մաքզն Ադրբեջանական Հանրապետութեան ուղղակի ենթակայութեան տակ վերցնելու վերաբերեալ:

Ադրբեջանի անկախութեան հռչակումից յետոյ, Խ.Ս.Հ.Մ. հանրապետութիւնների անկախացման օրէնքի հիմամբ, 1991 թ. Դեկտեմբերի 10ին Լեռնային Ղարաբաղում անցկացուեց առանձին հանրաքուէ, որին մասնակցած ընտրողների 98%ը (ընդհանուր բնակչութեան 82%ը) քուէարկեց յօգուտ Լ.Ղ.Ի անկախութեան: 1992 թ. Յունուարի 6ին Լ.Ղ.Ի նորընտիր խորհրդարանն ընդունեց բանաձեւ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան հռչակման մասին: Այսպիսով, հաշուի առնելով միջազգային իրաւդրութիւնն ու ստեղծուած նոր պայմաններում Հայաստանի հետ վերամիաւորման ձգտումն իրագործելու անհնարինութիւնը, Լ.Ղ.Հ. բնակչութիւնն ընտրեց իր ազգային ինքնորոշման մէկ այլ ձեւ՝ անկախութիւն:

1992 թ. ի վեր Լ.Ղ.Հ.ում գործում են պետութեանը բնորոշ իշխանութեան բոլոր մարմինները: Լ.Ղ.Հ. բնակչութիւնն ընտրում է իր պատգամաւորներին եւ նախագահին, ուգամաւորներին եւ նախագահին, ուրնի կառավարութիւն, բանակ, վերջապէս՝ Ադրբեջանում գործող դրամանիշերից եւ անձնագրերից տարբեր դրամանիշեր եւ անձնագրեր: Ինչեւէ, չնայած պետական ինքնիշխանութեան բոլոր յատկանիշների առկայութեանը, ներկայիս դրութեամբ Լ.Ղ.Հ.ը ճանաչուած չէ ոչ մէկ պետութեան կողմից:

Այստեղ մենք բախւում ենք միջազգային իրաւունքի գիտակցութեան մէջ առկայ մի վերջնական լուծումը չգտած հարցի հետ. որ պահից է ձեւաւորման ընթացքում գտնուող պետութիւնը ձեռք բերում միջազգային իրաւական ենթակայութեան յատկանիշներ:

Ի. Ի. Լուկաշուկի կարծիքով՝ նոր պետութեան առաջացման մասին վկայում է ինքնիշխան պետութեան գոյացումը[6]: Գ. Վ. Իգնատենկոն առաջնային է համարում հիմնադիր փաստաթղթերը՝ որպէս իրաւական կանոնաւորիչ բնոյթ կրող փաստաթղթեր, որոնք ամրագրում են ազգային ազատագրական պայքարի արդիւնքները եւ ձեւաւորում ինքնիշխան պետութեան առաջացումը:[7]

Մեր օրերում լայն տարածում ունի նաեւ մէկ այլ կարծիք, ըստ որի, միջազգային իրաւունքի լիիրաւ ենթակայ հանդիսացող պետութեան առաջացման համար անհրաժեշտ է պետականութեան բոլոր իրաւական յատկանիշների առկայութիւնը՝ ճանաչում, բնակչութիւն, տարածք, իշխանութիւն, անդամակցում միջազգային կազմակերպութիւններին:[8]

Չնայած վերջին տեսակէտը որոշակի հակասութեան մէջ է մտնում իրականութեան հետ, այնուամենայնիւ, անհրաժեշտ է նշել միջազգային իրաւական ճանաչման մեծ նշանակութիւնը, սկսած ազգային ազատագրական շարժման քաղաքական մարմինների ճանաչումից, ընդհուպ մինչեւ առաջացած պետութեան ճանաչումը՝ իբրեւ միջազգային իրաւունքի ենթակայի:

Միջազգային իրաւական ճանաչումն առաւելապէս կարեւորւում է այն դէպքերում, երբ ազգային ազատագրական շարժումն ուղեկցւում է զինուած պայքարով, ինչպէս դա առկայ է Լ.Ղ.Հ. դէպքում: Այստեղ առաջ է գալիս ազգերի ինքնորոշման սկզբունքը, որը Մ.Ա.Կ.ի Կանո-

6.- Ի. Ի. Լուկաշուկ, «Կողմերը միջազգային բանակցութիւններում», **Մոսկուա, 1983, էջ 7:**

7.- Գ. Վ. Իգնատենկո, «Գաղութատիրական վարչակարգից դէպի ազգային պետականութիւն», **Մոսկուա, 1983, էջ 96-97:**

8.- «Ճանաչումը ժամանակակից միջազգային իրաւունքում», էջ 31:

նակարգի ընդունումից յետոյ, բազմիցս, սկսած Գլխաւոր Համագումարի թիւ 545 (VI) բանաձեւից, իր հաստատումն է գտել միջազգային իրաւական այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ 1960 թ. գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անկախութեան շնորհման մասին Մ.Ա.Կ.ի Հռչակագիրը, 1966 թ. Մարդու Իրաւունքների միջազգային պակտերը, 1970 թ. Սկզբունքների Հռչակագիրը եւ 1975 թ. Ե.Ա.Հ.Խ. Եզրափակիչ Փաստաթղթի Սկզբունքների Հռչակագիրը:

Այսպիսով, Ինչպէս գրում է Եուրի Բարսեղովը, «ինքնահռչակման» ճապաղ դրոյթը ոչ մի կերպ չի կարող հիմք ծառայել չճանաչման համար, քանզի աշխարհի ճանաչուած պետութիւնների մեծամասնութիւնը, ներառեալ՝ Ա.Մ.Ն.ը, առաջացել են ոչ թէ ինքնիշխանութեան կանոնակարգուած փոխանցման, այլ՝ հէնց ինքնահռչակման եւ ազգային ազատագրական պայքարի արդիւնքում: «...Պատահական չէ, որ յատկապէս վերջին տասնամեակներում ճանաչման փատաթղթերն (ակտերը) ուղղակիօրէն կապում են ինքնորոշման իրաւունքի հետ (օրինակ՝ Թունիսի, Մարոկկոյի եւ այլոց ճանաչումը)»:[9]

Նման ենթատեքստում ինքնորոշման սկզբունքի յարգումն առաջին հերթին պահանջում է «մետրոպոլիա»ի կենտրոնական կառավարութիւնից, քանզի 1970 թ. Սկզբունքների Հռչակագրի համաձայն, ցանկացած պետութիւն պարտաւոր է ձեռնպահ մնալ որեւէ ուժային գործողութիւններից, որոնք կարող են խանգարել ժողովուրդներին իրականացնելու իրենց ինքնորոշման իրաւունքը:[10]

Գ. Մայերի կարծիքով՝ ազգերի ինքնորոշման իրաւունքի հարցն առաջանում է այն դէպքում, երբ «ենթախմբեր»ի նկատմամբ կառավարութեան կենտրոնական աշխատակարգերի օրինականութիւնը զրկում է ճանաչումից: Մայերը տեսնում է կենտրոնական կառավարութեան կողմից պատասխան գործողութիւնների երեք տարբերակ.

ա.- Այն կարող է «ենթախմբին» շնորհել ազատութիւն, հնարաւորութիւն տալով վերջիններիս հիմնել նոր ինքնիշխան պետութիւն, սեփական կենտրոնական կառավարմամբ.

բ.- Այն կարող է շարունակել «ենթախմբի» ճնշումը զէնքի միջոցով.

գ.- Այն կարող է փորձ կատարել փոխելու կենտրոնական կառավարութեան ձեւն ու քաղաքականութիւնը, «ենթախմբի» կարիքներին քաղաքականապէս աւելի ընդունելի արտայայտողը դառնալու նպատակով:[11]

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի դէպքում, Գ. Մայերի այս խորհրդածութիւններն առընչւում են աւելի շուտ Ղարաբաղեան Շարժման սկզբնական շրջանին, երբ կենտրոնական իշխանութիւնների կողմից Լ.Ղ.Ի.Մ. օրինական ինքնակառավարման մարմինների լուծարման պայմաններում, 1989 թ. Օգոստոսի 16ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի բնակչութեան լիազօր ներկայացուցիչների համագումարը հռչակեց Լ.Ղ.Ի.Մ.ը «անկախ խորհրդային տարածք» եւ յայտարարեց այդ տարածքում Ադր.Խ.Ս.Հ. Սահմանադրութեան իրաւազօրութեան դադարեցման մասին: Ի պատասխան այդ քայլին, ինչպէս նաեւ 1989 թ. Դեկտեմբերի 1ի «Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» Հ.Խ.Ս.Հ. Գ.Խ.ի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ որոշման, 1990-1991 թթ. ընթացքում Խ.Ս.Հ.Մ. ղեկավարութիւնը, Լ.Ղ.Ի.Մ. Զինուորական Պարետութեան, խորհրդային բանակի եւ ադրբեջանական ոստիկանութեան օժանդակ յատուկ ջոկատների համատեղ ջանքերով փորձում էր մարզը վերաենթարկել Ադրբեջանին՝ ընտրելով, այսպիսով, Մայերի կողմից առաջարկուղ 2րդ տարբերակը:

Ներկայումս, սակայն, նախկին «մետրոպոլիա»ն բախւում է այնպիսի իրավիճակի հետ, երբ նախկին «ենթախումբ»ը զինուած ազգային ազատագրական պայքարի միջոցով արդէն իսկ թօթափել է «մետրոպոլիա»ի լուծը եւ ստեղծել պետական իշխանութեան բոլոր անհրաժեշտ յատկանիշները, փաստօրէն վերածուելով անկախ պետութեան:

Նման պարագայում նախկին կենտրոնական կառավարութիւնը կանգնում է մի կարգ այլընտրանքային տարբերակների առջեւ. այն կարող է ճանաչել նորաստեղծ պետութեան անկախութիւնն ու պետական ինքնիշխանութիւնը, այն կարող է փորձել զէնքի միջոցով վերաենթարկել անկախացած «ենթախումբ»ը եւ այն կարող է ճանաչել «ենթախմբի» ազգային ազատագրական շարժման մարմիններն ու այդ մարմինների հետ խաղաղ բանակցութիւնների միջոցով փորձել կարգաւորել հակամարտութիւնը:

Միայն առաջին եւ երրորդ տարբերակներն են հիմք ստեղծում «ենթախմբի» եւ «մետրոպոլիա»ի միջեւ հետագայ յարաբերութիւնների կայունութեան համար: Նոյնիսկ երրորդ տարբերակում, եթէ չյաջողուի հասնել որոշակի համաձայնութեան, «ենթախումբ»ը կը պահպանի իր անջատողական միտումները,

---

9.- Ու. Գ. Բարսեղով, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան, իբրեւ միջազգային իրաւունքի ենթակայի ճանաչման իրաւական հիմնաւորումը», ***«Pro Armenia»*, թիւ 3, 1994, էջ 11:**

10.- «Հռչակագիր՝ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Կանոնակարգի համաձայն պետութիւնների միջեւ բարեկամական յարաբերութիւններին եւ համագործակցութեանը վերաբերող միջազգային իրաւունքի սկզբունքների մասին», Ժողովուրդների իրաւունքներն ու ազատութիւնները..., էջ 120:

11.- Գ. Մայեր, նշուած աշխատութիւնը, էջ 272:

եւ վաղ թէ ուշ առաջին գիծ դուրս կը գայ «ենթախմբի»՝ իբրեւ անկախ, ինքնիշխան պետութեան, ճանաչման խնդիրը:

Այս կապակցութեամբ, վերադառնալով նոր պետութիւնների միջազգային իրաւական ենթակայութեան հարցին, չի կարելի չհամաձայնել այն հաստատման հետ, որ պետութեան, իբրեւ միջազգային իրաւունքի ենթակայի ճանաչման գլխաւոր չափանիշը պէտք է հանդիսանայ պետութեան առաջացման ձեւերի համապատասխանումն ազգերի ինքնորոշման սկզբունքին:

Ամփոփելով վերը շարադրուածը՝ հարկ ենք համարում ստորեւ ներկայացնել քաղուածք ռուս յայտնի իրաւագէտ Վալերի Կուզնեցովի *«Ինքնիշխանութեան, ինքնիշխան հաւասարութեան եւ ազգերի ինքնորոշման սկզբունքները»* խորագիրը կրող յօդուածից.- « Ժողովուրդների ազգային ինքնորոշման իրաւունքը սերտօրէն կապուած է քաղաքական ընտրութեան ազատութեան՝ միջազգային յարաբերութեան նոր քաղաքական մտածելակերպի այս կարեւորագոյն սկզբունքի հետ: Ինքնորոշուած ժողովուրդներն ընտրում են ոչ միայն իրենց ներ-քաղաքական վիճակը, այլեւ՝ արտաքին քաղաքական կողմնորոշումը... Ինքնորոշումը նշանակում է ժողովուրդների իրաւունքը՝ ընտրելու զարգացման այնպիսի ճանապարհ, որն առաւելագոյնս է համապատասխանում նրանց պատմական, աշխարհագրական, մշակութային, կրօնական եւ նման այլ աւանդոյթներին ու պատկերացումներին: Քաղաքական ընտրութեան ազատութեան յարգումը դառնում է համագործակցութեան եւ ոչ թէ մրցակցութեան կամ հակամարտութեան հիմքը»:[12]

■

12.- Վ. Ի. Կուզնեցով, «Ինքնիշխանութեան, ինքնիշխան հաւասարութեան եւ ազգերի ինքնորոշման սկզբունքները», **էջ 267:**